ագռաւի բարբառը, երեխան էլ սկսում է խօսել մի նոր բարբառով, ոչ Նախիջևանի և ոչ էլ գրականական լեզուով։ Ծխական ուսումնարանում մօտ երեսուն և հինգ երեխայք կան տղայք և աղջիկներ մինչև 12 տարեկան. ինչպէս են դրբանք բաժանվում և ինչ են սովորում, ովքեր են ուսուցիչները և ինչ մարդկանց ձեռքին է ուսումնարանի կառավարչութիւնը ես մանրամասնաբար տեղեկութիւններ կը հաւաքեմ և իր ժամանակ կը յայտնեմ։

Ամսիս 4-ին կատարվեցաւ նոր եկեղեցու օծման հանդէսը փառաւոր կերպիւ. օծման հանդէսը կատարեց սրբազան Գէորգ արք-եպիսկոպոսը, որին օգնեցին ինչպէս այստեղի քահանաները, նոյնպէս Մօզդոկից, Արմավիրից և Եկատերինօդարից հրաւիրված քահանաներ և տիրացուներ։

Նոր եկեղեցու շինութեան մասին առանձին նամակով կը խօսեմ, թէ ով է շինել եկեղեցին, ում փողերով և ինչ կարգադրութիւններ էին տրված թէ սրբազանի, թէ Պօպովի կողմից։

Է. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր աշխատակից պ. Բաֆֆի հեռագրում է մեզ Թավրիզից որ այսօր ճանապարհ է ընկնում դէպի Թիֆլիս։

Ֆրանսիայի ձեռնածու պ. Կազընեվ իր վերջին ներկայացումը տալու է Արծրունու թատրոնում վաղը կիրակի, 25-ին հոկտեմբերի։ Ներկայացումը լինելու է նոր պրոգրամայով։

Հոկտեմբերի 22-ին սկսվեցան Թիֆլիսում Գոդրֆրուա եղբայրների ցիրկի ներկայացումները։

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, «Նուխու վիճակը ամենից աւելի կարօտ է հոգևոր իշխանութեան հսկողութեան և կրթված ու եռանդոտ հայ-լուսաւորչական քարոզիչների, որովհետև վիճակիս 15 հազար ուտիացիներ և 20 հազարից աւելի հայ-մահմեդականները կրօնական համոզմունքի կողմից տատանման մէջ են։ Բողոքականութիւնը աջողութիւն ունի նրանց մէջ և մանաւանդ հայ-մահմեդականները հակումն ունեն դէպի այդ դաւանութիւնը։ Հարկաւոր կը լինէր որ էջմիածինը լուսաւորչական քարոզիչներ ուղարկէր այդ տարրի մէջ քրիստոնէութիւնը տարածելու համար։»

Նուխուցց մեզ գրում են որ այս տարի աշունը բաւական տաք է անցնում և առաջին պիտոյքի մթերքները բաւական էժան են։ Վիճակի գիւղերի բնակիչները հազիւ հանգստացան վերջին տարիների ծանրութենից և թանգութենից։

Մեզ պատմում են որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը ահա երկու ամիս է որ զուրկ է կրօնի դասերից, կրօնուսոյցի տկարութեան պատճառով։ Կարծես թէ ժամանակաւորապէս չէր կարելի մի այլ կրօնուսոյց նշանակել։ Վեցերորդ դասատան մէջ շաբաթական դասերի թիւը շատ է, այն է շաբաթական 38 դաս։ Մինթէ հոգաբարձութիւնը կարծում է թէ այդքան դասերով բեռնաւորելով աշակերտներին, նրանք գիտնականներ կը դառնան։ Ընդհակառակն դա ամենալաւ միջոց է աշակերտներին մտաւորապէս մեռցնելու։

—

Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը թիւրքաց հայերի տնտեսական դրութեան մասին որ հետզհետէ տպվում էր ֆրանսերէն լեզուով Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրում, այժմ հրատարակվեցաւ Վիէննայում առանձին գրքոյկով։ Մենք ստացանք այդ բրոշիւրայի մի քանի օրինակներ։ Գրքոյկը շատ մաքուր է տպված։

—

Ստացանք Թիֆլիսաբնակ Եագոր Իվանովիչ Զայգէչտովից 8 ռուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Նախկին 1114 ռուբլ 53 կոպ. փողի հետ կանի 1122 ր. 53 կոպ.։

—

Խմբագրութեանս մէջ այսօր ծախվեցաւ Քիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուներից մին ագուլեցի Մարտիրոս Դուլգարեանցի վրա։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են որ վերջին ժամանակները Թիֆլիսի մէջ սկսել են յաճախ պատահել անձնասպանութիւններ։ Այս օրերս մի օրիորդ իրան Թունաւորեց, իսկ մի այլ օրիորդ իրան սպանեց րևվոլվերից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ" ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Բերլինից „Порядокъ" լրագրին գրում են հետևեալը։

Ասում են, որ ընտրութիւնների ժամանակ միշտ և ամեն տեղ կուսակցական և անհատական անկարգութիւններ են պատահում։ Օրինակ, ամբոխին այնպիսի խոստումներ են տրվում, որոնց կատարելու մասին ոչ ոք չէ մտածում։ Գուցէ այդ այդպէս է։ Ես շատ անգամ տեսել եմ ընտրութիւններ Աւստրիայի, Ունգարիայի և մինչև անգամ Թիւրքիայի մէջ այն միակ և առաջին պարլամենտի համար, որ գումարվեցաւ այդ թշուառ երկրի մէջ։ Ամեն տեղ ես վկայ եմ եղել զանազան զեղծումների, տեսել եմ այնպիսի արարքներ և լսել եմ այնպիսի ճառեր, որոնք հակառակ են խիստ բարոյականութեան կանոններին։ Ընդարիայի մէջ իշխանութիւնը մինչև անգամ բռնութիւն է կատարել ընտրողների վրա։ Բայց երբէք և ոչ մի տեղ չեմ տեսել և մինչև անգամ չեմ երևակայել մի այդքան անբարոյականացնող գործ, որ կատարվում է աչքերիս առաջ։

1878 թուականի ընտրութիւնների ժամանակ այստեղ բաւական ազեղ գործեր էին կատարվում։ Օրինակ, այն ժամանակն էլ ամբոխին գրգռում էին հրէաների դէմ։ Բայց այդ բոլորը չէր անցնում յայտնի սահմաններից և որ գլխաւորն է, վարչութիւնը վարվում էր եթէ ոչ կատարելապէս անրիծ, գոնեա համեմատաբար լաւ։ Տեղ տեղ նահանգներում վարչութիւնը ճնշումն էր գործում ընտրողների վրա, այնպէս որ բայխստագը չը վաւերացրեց մի քանի ընտրութիւններ։ Բայց այդ բոլորը առանձին դէպքեր էին, առանձին աստիճանաւորների մասնաւոր զեղծումներ, որոնց համար ամբողջ կառավարութիւնը չէր կարող պատասխանատու լինել։ Ընդհանրապէս կառավարութիւնը ընտրութիւններին չէր միջամտում, կատարեալ ազատութիւն տալով թէ ընտրողներին և թէ մրցող կուսակցութիւնների կանդիդատներին։ Մինչև անգամ կուսակցութիւնները հետևում էին կառավարութեան օրինակին։ Նրանք ցոյցեր էին անում իրանց օգտին, խօսում և գրում էին իրանց քաղաքական հակառակորդների դէմ։ Բայց կրկնում եմ, որ այդ բոլորը եթէ ոչ բարոյականութեան, գոնե քաղաքավարութեան սահմանները չէր անցնում։ Այն ժամանակ ոչ ոք իրան չէր թոյլ տալիս, մինչև անգամ չէր էլ մտածում կաշառել ընտրողներին և այդ բանը լրագիրների մէջ էլ յայտնել։

Այժմ ամեն տեսակ սահմաններ աւելորդ են համարում և գործում են այնպէս, կարծես թէ Գերմանիայում օրէնքներ չը կան։ Վարչական աստիճանաւորները սկսեալ մինիստրներից մինչև կարգապահները հանգստութեամբ հրամաններ են տալիս ընտրութիւնների ուղղութեան մասին, իսկ պահպանողականները մի կանոն են հնարել խաւար ամբոխին անբարոյականացնելու համար և այդ կանոնին նրանք հետևում են մինչև միամտութեանը հասցրած անամօթութեամբ։ Բացի ձրի լրագիրներից և ընտրողական ազդարարութիւններից, որոնք բաժանվում են բանւորներին, արհեստաւորներին, մանրավաճառներին և այլն, սովորութիւն է դարձել հարբեցնել հասարակութեան յիշեալ տարրերին։ Ահա երկրորդ ամիսն է, որ տասնեակ հիւրանոցներում և գարեջրատներում իւրաքանչիւր գիշեր հրաւիրում են և հարբեցնում են հասարակ ժողովրդին պահպանողականների հաշով, որոնք հէնց այդ տեղերում արտասանում են իրանց ընտրողական ճառերը։ Այդ ճառերով նրանք կոպտութեամբ գրգռում են ամբոխին գումարատէրերի դէմ ընդհանրապէս և մանաւանդ հրէաների դէմ։ Տօներին իւրաքանչիւր գարեջրատանը երաժշտութիւն է նուագում, բացի այդ ընտրողներին ձրիաբար բաժանվում են հազարաւոր տոմակներ թատրոնների, կաֆէ-շանտանների համար և այլն։ Իւրաքանչիւր բանւոր, մանրավաճառ կամ զինուոր կարող է գնալ, կամ մարդ ուղարկել և որքան կամենում է ձրի տոմակներ ստանալ։

Որովհետև Պրուսիայի պատմութիւնը հարուստ է ամեն տեսակ պատերազմներով, հետևապէս գրեթէ ամեն օր կարելի է տօնել որ և է կռուի տարեդարձը. այդ բանից էլ օգուտ են քաղում պահպանողականները իրանց անբարոյականացնող ցոյցերը շարունակելու համար։ Բացի սովորականներից նրանք արտաքոյ կարգի տօներ են կազմում ի պատիւ զանազան յաղթութիւնների։ Օ-

---

Աջ պատի մօտ, պատուհանի տակ, մահճակալի վրա ձգված, պառկած էր մի ինչ որ մարդկային կմախքի նման մարմին, փաթաթած դեղնած կաշիում։ Նրա բաց աչքերից ու ծանր շնչառութենից ես համոզվեցայ, որ այս կմախքը դեռ ապրում է։ Կասկած չը կայ, որ իմ առաջ պառկած էր խեղճ Գրիգորը— ազգի բարի, ժրաջան մշակը— Դ. գիւղի ուսուցիչը։ Սիրտս լքցված էր, ես չէի կարողանում պահել արտասուքս. կրծքիս վրա, կարծես, դրած լինէր մի ծանրութիւն։

Շատ դժուար էր իմանալ քանի տարեկան էր Գրիգորը— քսան, երեսուն, թէ քառասուն— միայն նայելով նրա դեղնագոյն, հանգած երեսի վրա, իսկոյն կարելի էր իմանալ, թէ նա տանջվում է կրծքացաւով և որ նրան էլ երկար վիճակված չէ ապրել, նրա արևի լոյսը շուտով պիտի խաւարվէր։ Ոսկոր ու կաշի դարձած խեղճ ուսուցիչը այն աստիճան ցամաքել մաշվել էր, որ չօշափելով նրա մարմինը հեշտութեամբ կարելի էր համարել ոսկրների բոլոր խորթութիւնները։

Ես բարևեցի ուսուցչին։ Նա փորձեց բարձրացնել գլուխը, բայց չը կարողացաւ, միայն մեկնեց աջ ձեռքը։

—Դուք ուսուցիչ էք, հարցրեց նա հազիւ լսելի ձայնով և երբ ես պատասխանեցի. «այո, ուսուցիչ եմ», նա երեք անգամ արտասանեց. ուսուցիչ... ուսուցիչ... ուսուցիչ... Ուզում էր էլի ինչ որ ասել, բայց չը կարողացաւ, միայն նրա կապտագոյն դեղնած երեսից կարելի էր եզրակացնել, որ այս «ուսուցիչ» բառով զարթեցրի ես նրա հոգու մէջ շատ յիշողութիւններ, մտածմունքներ, չը գիտեմ միայն ուրախ թէ տխուր...

Այս անցաւոր կեանքի թողող հայեացքը դարձրած էր դէպի ինձ. ես չը կարողացայ այլ ես ինձ պահել, ես խեղդվում էի. այն կողմը դարձրի երեսս և սկսեցի նայել պատի վրա կախած ժամացոյցի ու պատկերների վրա։ Ամենից ցած կախած պատկերի ընդհանուր գծագրութիւնը շատ նմանութիւն ունէր մեռնող ուսուցչի հետ. լաւ զննելով այս պատկերը, նայեցի յետոյ հիւանդի վրա։

—Հը, ինչ է... ճանաչում էք... հարցրեց նա նոյնպէս ցածր ձայնով, ինչպէս առաջին անգամ. —այո, այդ ես եմ... քսան և հինգ տարեկան... Աշխատեց մի փոքր բարձրանալ նայելու այն պատկերի վրա, բայց չը կարողացաւ. հազը չը թոյլ տուեց։

—Դժուար չէ իմանալ, նկատեցի ես, դառնալով դէպի հիւանդը.— բայց գիտէք...

—Այո... շատ փոխվել եմ... աւելացրեց հիւանդը, և կարծես կամենում էր ծիծաղել, գոնէ այդ լսվում էր նրա ձայնից, թէև երեսի վրա ոչինչ ժպիտ չէր յայտնվում։

—Ա'խ... երանի՜ և հազար երանի՜ այն օրին, երբ այդ պատկերը քաշեցին... կարծես երէկ լինէր այդ բանը... ասաց ու սկսեց լաց լինել... Սենեակի միւս անկիւնից նոյնպէս լսելի եղաւ լացի ձայն. այդ պառաւի ձայնն էր, որի հետ ես եկայ ուսումնարան—Նա Գրիգորի ծծմայրն էր։

—Եւ մթթէ, ճշմարիտ, ինձ վիճակված է այսօր կամ վաղը մեռնել, այլ ես չը տեսնել լոյս աշխարհը... երանի թէ վերջին վէպիկս վերջացնէի և ապա հող մտնէի... Դուցէ ես էլի վերկենամ, մանգամ... Ոհ, Աստուած իմ... Դուք լուռ էք և շատ լաւ էք անում... բժիշկ... ա՛խ... հիւանդը երկու ձեռքով պինդ բռնեց կուրծքը.— երէկ բժիշկը ասաց, որ ամսոյս 23-ին.... Ա՛խ, Սեդրակ, դու այստեղ ես, դարձաւ նա 13 տարեկան երեխային,—հա, ինչ ես չինում։

Սեդրակը սրբեց աչքերից արտասուքը ու պատրաստվում էր դուրս գնալ, նրա սիրտն էլ մորմոքվում էր իր հիւանդ ուսուցչի վրա։ Ինչպէս յետոյ տեղեկացայ ամբողջ երեք տարի Սեդրակը սովորել էր Գրիգորի մօտ և շատ լաւ յիշողութիւններ դուրս էր տարել ուսումնարանից. այն քաղցր վարմունքը, քաղաքավարի խօսքերը ու խրատները, որ միշտ լսել է իր սիրելի ուսուցչից, նա չէր տեսել ոչ մի տեղ, անգամ իր մօրից։

—Մի լաց լինիր, Սեդրակ, մի վախիր, ես մեռնելու չեմ... և ինքը սկսեց լաց լինել։

Ի հարկէ խելօք Սեդրակը չէր հաւատում իր ուսուցչի խօսքերին ու երկու ձեռքով ծածկեց երեսը և դուրս գնաց։ Սեդրակին հետևեցին սենեակում հաւաքված մնացած աշակերտները, որոնք հանդարտ, հերթով մօտենում էին վարժապետի մահճակալին, նայում երեսին ու դուրս գնում, և այս բոլորը կատարվում էր առանց աղմուկի։ Ոչ թէ միայն Գրիգորի աշակերտները, այլ և գիւղի բոլոր գիւղացիները, մեծ ու փոքր այցելեցին իրանց հիւանդ «վարժապետին» վերջին անգամ բարևելու նրան. և մեռնողը սիրով նայում էր ամեն մէկին ու մոքով հրաժարվում նրանցից։ Մանաւանդ երկար էր մնում Գրիգորի հայացքը իր սիրելի աշակերտների երեսի վրա և իւրաքանչիւրին առանձին ասում. «սովորիր, որ մարդ դառնաս»։

Սիրտս կտրատվում էր այս մորմոքող տեսարանը տեսնելիս։ Թիֆլիսում ինձ պատահել է ներկայ գտնվել մի երիտասարդ ուսուցչի մահվան, բայց այն ինչ որ ես այստեղ տեսայ, ըզդացի, այնտեղ սրա հազարերորդը չը կար. եկան քանի մի անձինք, այն էլ իր հին աշակերտներից, լաց եղան ու դուրս գնացին, իսկ այստեղ, ինչպէս ասաց պառաւը. «բոլոր աշխարհը լաւիս էր». հետաքրքիր էի իմանալ թէ ինչպէս էր գրաւել սա ժողովրդի համակրութիւնը, սէրը և այդ բանը հարցրի հիւանդից։

—Կեանքիս մէջ վատութիւն ոչ ոքին արած չեմ, խօսեց Գրիգորը ու լռեց։

III

Մայիսի քսան և չորսին, լուսադէմին, մեռաւ Դ. գիւղը ուսուցիչ Գրիգորը։ Ափսոս որ չը կարողացայ ներկայ գտնվել նրա մահվան վերջին րոպէներին, այս պատճառաւ և ընթերցողը չը պիտի նեղանայ, որ ես բաց եմ թողնում նրա մահվան նկարագրութիւնը. պատմում էին որ խեղճը երկար կռւում էր մահի դէմ, յաւիտեան փակելով իր աչքերը... Խօսք չը կայ, որ շատ արտասուք պիտի թափած լինէին նրա փետացած դիակի վրա իր անկեղծ սրտով սիրած գիւղացի մանուկները։

Քսան և եօթին պիտի թաղէին Գրիգորին. ես շտապեցի գնալ գիւղը անպատճառ ներկայ գտնվելու յուղարկաւորութեան։ Բացի բազմաթիւ գիւղացիներից ներկայ էին և երեք մարդ «ինտելիգէնցիայից». երկու ուսուցիչ և մէկ ուսուցչուհի։ Սրանք բոլորը շատ մօտիկ ճանաչում էին հանգուցեալին և եկել էին նրան իրանց վերջին պարտքը տալու։ Եկաւ քահանայ տէր-Սիմօնը։ Ուսուցիչները բարձրացրին դագաղը և երգելով տխուր շարականը, դուրս եկան եկեղեցու դաւիթը. այստեղ ասեղ ձգելու տեղ չը կար. մօտիկ գիւղերից անգամ եկել էին պատուելու անբաղդ Գրիգորին։

Տխուր կերպով տարածվում էր փոքրիկ զանգակի ձայնը աշտարակի բարձրութիւնից, երբ ներս տարան անշուք դագաղը գիւղի փոքրիկ եկեղեցին ու դրին մէջ տեղը պատրաստած սեղանի վրա. եկեղեցին ես լիքն էր հասարակ ժողովրդով։ Ուսումնարանի աշակերտները, մոմերը ձեռին, շարվեցան դագաղի շուրջը։ Ամենքի սրտերից արիւն էր կաթում. ընդհանուր տխրութիւն տիրում էր ամեն տեղ։

Ս. պատարագը վերջացաւ։ Ուսուցիչներից մէկը եկեղեցում խօսեց մի քանի խօսք, գովելով Գրիգորի անչափ աշխատասիրութիւնը ու եռանդը, իսկ ուսուցչուհին գերեզմանի վրա։ Տէր Սիմօնը արտասուքից խեղդված հազիւ արտասանեց վերջին խօսքը և դագաղը իջեցրին խոր գերեզման....

Այսպէս Դ. գիւղի հայ ժողովուրդը յաւիտեան թաղեց իր սիրելի ուսուցչին։

«Բոլոր գիւղը լալիս էր», ներկայ չէր միայն պառաւը. ասացին խեղճը ցնորված ընկած է Գրիգորի մահճակալի վրա։

Զ. Ռ.

բինակ Լէյպցիգի մօտ եղած յաղթութեան տարեդարձը տօնելու համար 43 հիւրանոց և այդ տեսակ հիմնարկութիւններ էին բռնված։ Այդ բոլոր տօների նպատակն է գրգռել ամբոխի ազգասիրութիւնը։ Այդպիսի ժողովների մշտական ճառախօսները մեկնում են, որ այդ բոլոր փառաւոր յիշատակների համար նրանք պարտական են հօհենցօլլերների փառքով պսակված տանը, հաստատ և ամուր կառավարութեանը, որ երբէք չէր կարող փառքով ծածկել իր ժողովրդին և հզօր կայսերութիւն հիմնել, եթէ հայրենիքի անամօթ թշնամիները, ազատամիտները, միջոց ունենային խանգարել կառավարութեանը, ինչպէս այդ անում են նրանք այժմ, աշխատելով արգելել Իշխան Բիսմարկին բարեւներին բարօրութեանը հասցնել։

Օտարօտի է կրկնել, որ կաշառելը ընդհանրապէս անազնիւ և վնասակար գործ է և որ նա անբարոյականացնում է թէ կաշառողին և թէ կաշառվողին։ Բայց, իմ կարծիքով, կաշառելու ոչ մի ձևը այնքան անբարոյականացնող հետևանք չէ կարող ունենալ, որքան խմիչքատների մէջ ամբոխին հարբեցնելը։ Բաւական է նրանցից մէկի մէջ ներկայ գտնվել համոզվելու համար, որ ուելի վատ և անբարոյական միջոց չէ կարելի հնարել։ „Անկախ թղթակիցները“ վառ գոյներով նկարագրում են „հակաառաջադիմական շարժումը“, որ տարածվել է ամբողջ Բերլինի մէջ և քաջութեամբ աւելացնում են, թէ „պահպանողական ուղղութիւնից և Իշխան Բիսմարկի քաղաքականութիւնից ոգևորութիւնը այնքան ընդհանրացած և անսանձելի է, որ Իշխան Բիսմարկը կարող է իրան բաղդաւոր մարդ անուանել։“ Ես կասկածում եմ, որ Իշխան Բիսմարկի կարծիքը գործերի այժմեան դրութեան մասին նման լինէր նրա վարձած ատիճանաւորների կարծիքին։ Բայց եթէ նա ճշմարիտ իրան բաղդաւոր է համարում, ուրեմն դա այնպիսի մի բաղդաւորութիւն է, որին չի նախանձի ոչ մի իսկական պետական գործիչ, որովհետև իւրաքանչիւր մարդ հասկանում է, թէ այդպիսի բաղդաւորութեան համար ապագայում ժողովուրդը վճարում է ծանր և դառն տանջանքներով։ Պահպանողականները ճշմարիտ կարողացան մի „շարժում“ ստեղծել, բայց ոչ „հակաառաջադիմական“, այլ „հակասեփականական։“

Ինչ կը վերաբերի ոգևորութեանը, նա կայ, բայց գաղանային ոգևորութիւն, որ հարբեցողութեան հետևանք է։ Խմիչքատների մէջ հաւաքվող ամբոխը, որ պահպանողական ժողովի փառաւոր անունն է կրում, գրեթէ չէ լսում ճառախօսներին։ Միայն սկզբից մի փոքր կարգապահութիւն է լինում, իսկ յետոյ քանի որ խմում են աւելի և աւելի չեն լսում արտասանած ճառերը։ Բարձր խօսում են, յիշոցներ են տալիս, ծիծաղում են, դատարկ բաժակներով ծեծում են սեղանը, դարձեալ գարեջուր պահանջելով, ծառաները վազում են սեղանների անցքերի մէջ, մի խօսքով այդ ժողովները կատարեալ Սոդոմ են, որտեղ ոչինչ չէ կարելի լսել և ոչ ոք էլ չէ ցանկանում լսել։ Անմտութեամբ, առանց մրցածութեան ծափահարում են զուարճութեան համար։ Մէկը կը ծափահարէ և հարբած ամբոխը շարունակում է սկսածը։ Բայց երբ չափից դուրս կը հարբեն, կռիւ է սկսվում։ Ոչ մի ժողով չէ լինում, որի ժամանակ մէկին չը ծեծէին, վզին տարով դուրս չանէին, կամ մի ընդհանուր կռիւ չը պատահէր։ Ծեծում են բարեկամներին և օտարներին, առանց ջոկելու, որովհետև ձեռքերը քոր են գալիս։ Մի մարդու դուրս ձգելը այդ ժողովների նախագծի մասն է կազմում։ Կը բռնեն մի մարդու և կապոցի նման ձեռքից ձեռքի վրա կը դցեն, մինչև այդ մարդը դռնից դուրս կը նետվի։

Եւ այդ բանն էլ առանց պատճառի, ուրախութեան համար է կատարվում։ Ընտած են հարբած բանւորներ և յանկարծ լսում են ճառախօսների կցկտուր խօսքեր. „արիւնարբու անաստուածներ, մշակ դասի արիւնով և քրտինքով ապրող հարստահարողներ, պէտք է վերջ դնել դումարի արտօնութեանը, թող Պալեստինա կորչի հրէի ծնունդը“ և այլն այս ձևով։ Եւ յանկարծ բանւորներից մէկը կանչում է. «Ի՞նչ էք կարծում, եղբայրներ, այս երկար քիթ ունեցողը հրէայ չէ»։—„Հրէայ է, պատասխանում են նրան, դուրս անենք, դուրս“։ Այնուհետև հրէայ կարծվածի գլխարկը քաշում են մինչև նրա աչքերը և, բռունցքներ տալով, դուրս են գցում դռնից։—„Բայց ես հրէայ չեմ, կանչում է հրէայ կարծուածը, ես գերմանացի եմ...“ Նրան չէ լսում հարբած ամբոխը։ Պատահում է, որ կարծեցեալ հրէան ժողովի մէջ բարեկամներ և ծանօթներ է ունենում և այն ժամանակ ընդհանուր կռիւ է սկսվում։ Հասկանալի է, որ իսկական հրէաները այդպիսի ժողովների մէջ երբէք չեն լինում։

Ժողովներին ներկայ գտնվող պօլիցիականները, որոնք փակում են ազատամիտների ժողովները, հէնց որ մի փոքր աղմուկ է բարձրանում, ներողամտութեամբ վերաբերվում են պահպանողականների անկարգութիւններին, այնպէս որ փողոցային պօլիցիականները բռնում են նրանց, որոնք փողոցում էլ կռիւը շարունակում են։

Չը կարծէք, որ ես ձեզ բացառական մի պատկեր եմ նկարագրում, որ պատահմամբ տեղի է ունեցել։ Տարաբաղդաբար դա մի երևոյթ է, որ պատահում է ամեն գիշեր զանազան տեղերում։ Մինչև անգամ կարգապահ-պօլիցիականները զանգատվում են. „եթէ, ասում են նրանք, այսպէս շարունակվի, հարկաւոր կը լինի հրաժարվել պաշտօնից։ Բոլոր գժերը կարծես կտրել են իրանց կապանքները, կռւում են փողոցների մէջ, իսկ գողութիւնները հետզհետէ շատանում են։“ Եւ այդ ճշմարիտ է։

Ամենից վատն այն է, որ ընտրողական ցոյցերի այդ ձևը ոչ թէ միայն մայրաքաղաքում, այլ և նահանգների մէջ է գործադրվում։ Բոլոր քաղաքներում, որտեղ պահպանողականները իրանց թոյլ են զգում, նրանք դիմում են ամբոխին հարբեցնելու միջոցին, որ միշտ անկարգութիւններով է վերջանում։

Եւ այդ բոլորը կատարվում է „ընդհանուրի բարօրութեան“ և կառավարութեան անունով։ Դատեցէք, թէ վերջը դրանք ինչ ազդեցութիւն կը գործեն և ինչպիսի հետևանքներ կունենան։ Բացի այդ դրական միջոցներից, գործ են դնում և բացառականներ, այսինքն պահպանողականները աշխատում են խանգարել ազատամիտների ժողովները։ Նրանք այդ նպատակին հասնելու համար բացի յայտնի միջոցներից գործ են դնում և դաղտնիներ, որոնց մասին ես մի այլ անգամ կը գրեմ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից լրագիրներին հեռագրում են հոկտեմբերի 15-ին հետևեալը. Բերլինը բէյխստագի անդամ ընտրեց չորս առաջադէմներին՝ Բիսմարքին, Լէօվէին, Զաուկէնին և Վիրխովին։

—Վիէննայի լրագիրները հաղորդում են, որ իտալական թագաւորը և թագուհին հասան հարաւային երկաթուղու կայարանը, 7 ժամին և 40 րոպէին կէսօրից յետոյ։ Հումբէրտ թագաւորին և Մարգարիտա թագուհուն ամենասիրալիր կերպով դիմաւորեցին կայսրը, թագաժառանգը և Կարլ-Լուդվիգ. Վիլհելմ-Ալբրէխտ, Յովհան-Սալվատոր և Եւգենիա էրցհերցօգները։ Միապետները գրկեցին միմեանց և համբուրվեցան։ Կայսրը համբուրեց իտալական թագուհու ձեռքը։ Հումբէրտ թագաւորը գրկեց և համբուրեց թագաժառանգ Իշխան Ռուդոլֆին։

—Ֆրանսիական լրագիրները հոկտեմբերի 16-ից հաղորդումեն հետևեալը։ Երէկ Գամբէտտա կանչեց Դէվէս, Գիշար, Լէգրան և Կազա պատգամաւորներին և յայտնեց նրանց, որ ինքն ժամանակաւորապէս կընդունի մինիստրների խորհրդի նախագահութիւնը, բայց այն պայմանով, եթէ նոր պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը, նախ քան թէ ինքն գործերի կառավարութիւնը կընդունի, կը յայտնի նրան իր վստահութիւնը։ Նախ քան թէ այդ քայլի անելը, Գամբէտտա տեսակցութիւն ունէր Ժիւլ-Ֆէրրիի հետ։ Հոկտեմբերի 26-ին, ֆրանսիացիները առանց կռւի կէրուանը գրաւեցին։ Թշնամին դէպի հարաւ փախաւ։

—Բերլինից հեռագրում են լրագիրներին հոկտեմբերի 26-ին հետևեալը։ Մինչև այժմ յայտնի են միայն 110 շրջանների մէջ կատարված ընտրութիւնների հետևանքները։ Երեսուն և մէկ շրջանում կրկնաքուէարկութիւն կը լինի. կենտրօնի կուսակցութեան անդամներ ընտրված են քսան և երկու, առաջադէմները—տասներկու. սէցէսիօնիստներ, ազգային-ազատամիտները և ժողովրդական կուսակցութեան անդամները— վեց վեց, պահպանողականներ—երեք, ազատ պահպանողականներ—եօթ, լեհացիներ— երեք. «բողոքի» կուսակցութեան անդամներ—երեք, պարտիկուլարիստներ—երկու։ Գիւղական շրջաններում ընտրութիւնների հետևանքները դեռ ևս յայտնի չեն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Պետերբուրգի պրոկուրօրը լսել էր, որ այդ տեղի մի հարուստ և գեղեցիկ փողոցում բնակվում է մի զառամեալ մարդ, որ համարեա երեխայական աստիճանի էր հասել։ Նա ունէր բաւական հարստութիւն, բայց ապրում էր շատ աղքատ։ Պրոկուրօրը երկու պաշտօնակատար անձանց հետ գնաց ծերունու բնակարանը։ Մանելով բակը, նրանք տեսան մի փայտեայ հին և անպիտան տուն, որը ցած չինած էր, համարեա երկրի մէջ, այնպէս որ բոլոր խոնաւութիւնը բակից թափանցում էր նրա մէջ պատուհանների միջոցով, որոնք դասաւորված էին գետնից ցած։—

Այս տան նախասենեակը, ուր մտան պրոկուրօրը և նրա ուղեկիցները, բաւական հանդուրժելի էր։— Նրա պատերը զարդարված էին մաքուր պաստառներով և տալիս էին նրան նոր ձև։— Այստեղ տեսան սրանք երկու կանանց և մի զինուորի, որոնք ինքնաեռի մօտ նստած թէյ էին խմում։— Երբ պրոկուրօրը հարցրեց նրանց ով լինելը, կանանց մէկը պատասխանեց թէ իրան պարոնի խոհարարի կինն է։—

—Կարելի է տեսնել ձեր պարոնին, հարցրեց պրոկուրօրը։

—«Ո՛չ, չէ կարելի է, պատասխանեց կինը, նա ոչ ոքի չէ ընդունում իր մօտ։

Երբ պրոկուրօրը յայտնեց իր ով լինելը, խոհարարի կինը իսկոյն բացեց դուռը դէպի միւս սենեակը։— Նախասենեակից նրանք մի քանի աստիճան ցած իջնելով, մտան մի անպիտան և մութ սենեակ, որի պատերը խոնաւութեամբ և պաստառներով էին միայն ծածկած, իսկ յատակի տախտակամածը այնքան թաց էր, որ պրոկուրօրը և նրա ուղեկիցներցը ստիպված էին կրկնակօշիկ (колоши) հագնել։—Այդ սենեակը զուրկ էր տան կարասիքներից, միայն դրած կային այնտեղ անդուկներ և զամբիւղներ, որոնք բոլորը անպիտան բաներով և կոտորներով լիքն էին։— Մի ուրիշ անդուկի մէջ կային թղթեայ փաթեթներ, իսկ անկիւնում զլզված էին զինուորական պարագաներ և սրա նմանները։—

Սրանք անցան մի ուրիշ փոքր, նեղ և մութ սենեակ, որտեղ տեսան ծերունուն անկողնակալի վրա պառկած։—Այդ սենեակի միակ պատուհանը վարագուրված էր մի ցեխոտ կեղտաշորով։—Անկողնակալի մօտ դրած կար մի սակառ ջրկրած (ушатъ) մի անպիտան հիւթով։ — Պրոկուրօրի կանչելուն պէս, ծերունին բարձրացաւ տեղից և գնաց առաջին սենեակը։—Նա փաթաթած էր մի ճղրոտած խալաթի մէջ, նրա բազմախորշոտ երեսը և ալեոր մազերը ճմլված էին ցեխով։—Պրոկուրօրը հարցրեց, թէ ինչու չէ լուացվում, պատասխանեց թէ լուացվում է և օգոստոսին էլ եղել է բաղնիսում։—

—Ձեզ մօտ երթ և եկ անողներ լինում են, ծանօթներ ունէք թէ ոչ, հարցրեց պրոկուրօրը ծերունուց։—

—Ինչպէս չէ, գալիս են բարի մարդիկ և մի քանի հօլլանդացիք, որոնցից մէկը միշտ բերում է ինձ համար մի չիշ գարեջուր, պատասխանեց ծերունին։—

—Ձեր ծառայից գոհունակ էք։

—Ծառայից. ծառայից ես վախում եմ, եղաւ ծերունու պատասխանը։

—Հարստութիւն և փող ունէք։

—Քիչ ունեմ բանկում, մինչև հարիւր հազար ռուբլի։

—Կարելի է ուրիշ տեղ էլ ունէք փող կամ կայք։

—Ահա այն զամբիւղի մէջ կարծեօք քիչ կան։ Եւ արդարև զամբիւղի յատակում, որ լիքն էր բոլոր անմաքուր բաներով, գտան նրանք մինչև 40 հազար ռուբլի։

—Կարելի է ուրիշ տեղ էլ ունէք փող, շարունակեց իր հարցը պրոկուրօրը։

—Ահա այն զզրոցի (комодъ) մէջ կարծեօք ես կայ։—

Զզրոցը բանալով գտան նրա մէջ մինչև 35 հազար ռուբլի։

—Այդ ինչ իրեղէններ են, որոնք թափված մընում են այդ անկիւնում։

—«Սրանք ապրանքներ են, որոնց համար ես տուել եմ 45,000 ռուբլ, և հօլլանդացիք էլ վեր են առել ինձնից 30,000 ռուբլ պաստառի համար։

—Դուք կտակ չէք արել, հարցրեց պրոկուրօրը։

—Ինչու։

—Ի հարկէ մեռնելու էք։

—«Ո՛չ, ես չեմ կամենում մեռնել։

Սենեակից դուրս գալու ժամանակ, պրոկուրօրը դարձաւ դէպի խոհարարի կինը զանազան հարցմունքներով, որից և տեղեկացաւ, թէ խոհարարի կինը ստանում է ամսական 5 ռուբլ ռոճիկ։—Նա ուրիշ գործ չունէր, միայն պատրաստում էր ծերունու համար իւրաքանչիւր ամիս քարասերմիկ բոյսից կերակուր, իսկ այժմ իւրաքանչիւր երկու շաբաթ պատրաստում է խաչու կերակուր և բրթում նրա մէջ ծերունու համար սև հաց։—Այն մեծ սակառը (ушатъ) անմաքուր հիւթով, որը դրած էր ծերունու անկողնակալի մօտ, պարունակում էր իր մէջ այդ կերակուրը։

Այդ այցելութիւնից յետոյ, երկու շաբաթ չանցած, վախճանվեց ծերունին, թողնելով 200,000 ռուբլ։—Ծանօթները մինչև նրա վախճանվելը չէին դադարում այցելել նրան միշտ։— Ժողոված տեղեկութիւններից յայտնի երևում է, որ ծերունին ծնված էր 1770 թ. նա Մօսկվայի համալսարանի ստուդենտ է եղած, յետոյ մի նահանգական համալսարանի պրոֆէսօր և օտար տերութեան ուսումնական ընկերութեան թղթակից, իսկ յետոյ թողնելով իր 20 տարուայ ծառայութիւնը, պարապվել է տոկոսառութեամբ։—1850 թ. նա ստացել էր 400 հազար ռուբլ ժառանգութիւն, բայց մի և նոյն ժամանակ էլ կերակրվում էր այն քարասերմիկ կերակուրով։— Պէտք է կարծել, որ ծերունու հարստութիւնը 200 հազարից աւել էր, որովհետև նա բացի իր կարողութիւնից, ստացել էր մեծ ժառանգութիւն, որը պահել էր ու չէր փչացրել։—Այդ հանգամանքը նրա ժառանգութեան համար բացել էր այն ժամանակ մեծ կռիւ։—Հանգուցեալը չը կարողացաւ յառաջադրել բոլոր վկայագրերը (документы) իր իրաւունքները հաստատելու մասին, որով գործը մնաց երկար ժամանակ անվճիռ, և այդ բոլոր գործողութեան միջոցում ծերունին իւրաքանչիւր օր գալիս էր սենատի ատենադպրի մօտ, որի ձեռքումն էր նրա գործը։ Նա դնելով ձեռքը իր կրծքի վրա, ամենամեծ խոնարհութեամբ և համեստութեամբ զլուխ էր տալիս օրը երեք անգամ։—Ատենադպրի հետ վարվում էր մի և նոյն քաղաքավարութեամբ և փողոցում պատահած ժամանակ։

Կարդալով այդ, ընթերցողը ակամայ պիտի մտաբերէ Գոգոլի Պլիշկինը, որը այժմ տալիս է իր տեղը յիշեալ ծերունուն, բայց ինչպիսի կերպիւ կարողացել է այդ պրոֆէսօրը ձեռք բերել այդպիսի անհաւատալի հարստութիւն—այդ հարցը դժուար է բացատրել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ